Կրոնական կազմակերպության պետական գրանցումը մերժելու օրենքով նախատեսված հիմքերը

Կազմակերպական-իրավական տեսակը	**«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք**	**«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի**
Կրոնական կազմակերպություն	1.Կրոնական կազմակերպության պետական գրանցումը կարող է մերժվել գործող օրենսդրությանը նրա հակասելու պարագայում: (16-րդ հոդվածի 2-րդ պարբերություն)	**Կրոնական կազմակերպության գրանցումը մերժելու հիմքերն են՝** **1.** կրոնական կազմակերպության կազմավորման՝ օրենքով սահմանված կարգի խախտումը. *(մասնավորապես՝* ***«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝*** *քաղաքացիների խումբը ճանաչվում է որպես կրոնական կազմակերպություն, եթե այն բավարարում է հետևյալ պայմաններին.* *1) չի հակասում սույն օրենքի 3-րդ հոդվածի դրույթներին, այն է՝ քաղաքացու նկատմամբ չի թույլատրվում որևէ հարկադրանք կամ բռնություն՝ ժամերգություններին, կրոնական ծիսակատարություններին և արարողություններին, կրոնի ուսուցմանը մասնակցելու կամ չմասնակցելու հարցերի նկատմամբ իր վերաբերմունքը որոշելիս:* *Խղճի ազատության իրավունքի իրագործումը ենթակա է լոկ այն սահմանափակումներին, որոնք անհրաժեշտ են հասարակական անվտանգությունը և կարգուկանոնը, քաղաքացիների առողջությունն ու բարոյականությունը, հասարակության մյուս անդամների իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար:):* *2) հիմնվում է պատմականորեն կանոնացված որևէ սուրբ գրքի վրա.* *3) իր դավանանքով մտնում է համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի մեջ.* *4) զերծ է նյութապաշտությունից և ուղղված է դեպի հոգևոր ոլորտները.* *5) ընդգրկում է առնվազն 200 հավատացյալ անդամ: Մինչև 18 տարեկան երեխաները չեն կարող անդամագրվել կրոնական կազմակերպությանը՝ անկախ կրոնական ծեսերին իրենց մասնակցելու պարագայից և այլ հանգամանքներից:* *Սույն պայմանները (բացի «ա» կետում նշվածից) պարտադիր չեն միայն ազգային փոքրամասնությունների կրոնական կազմակերպությունների համար՝ իրենց ազգային դավանանքով:) (5-րդ հոդված):*

		2. սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված փաստաթղթերը չներկայացնելը. (*մասնավորապես՝ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝* *Կրոնական կազմակերպությունը գրանցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն պետք է ներկայացվի* ***կրոնի գործերով պետական լիազորված մարմնի փորձագիտական եզրակացությունը***՝ *«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի* *5-րդ հոդվածի «բ»-«ե» ենթակետերով սահմանված պայմանների վերաբերյալ:* ***(14-րդ հոդված)*** **3.** ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությունն օրենքին *(մասնավորապես՝ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կրոնական կազմակերպության կանոնադրությունը տվյալներ է պարունակում կրոնական կազմակերպության բնույթի և գործելու վայրի, դավանական պատկանելության, կրոնական միավորման կառուցվածքի, աղոթատեղիների և գույքային դրության, ձեռնարկություններ հիմնելու ուսումնական և հրատարակչական հաստատություններ ստեղծելու մտադրությունների, գործունեության դադարեցման դեպքում գույքային և այլ հարցերի լուծման կարգի մասին, ինչպես նաև պարունակում է տվյալ կազմակերպության գործունեության առանձնահատկությունների հետ կապված այլ դրույթները)* կամ կրոնական կազմակերպության ներկայացրած այլ փաստաթղթերին. **4.** անվանման անհամապատասխանությունը օրենքով սահմանված պահանջներին, եթե անվանման գրանցումը մերժվել է, և անձը չի ներկայացրել այլ անվանում: (36-րդ հոդված 1-ին մաս) *(մասնավորապես՝* *1) ոչ առևտրային կազմակերպության անվանման գրանցումն իրականացվում է կազմակերպության գրանցման հետ միաժամանակ:* *(32.1 հոդվածի 1-ին մաս)* *2) Կազմակերպության անվանման գրանցումը մերժվում է, եթե դրա*

		տարբերակող նշանակություն ունեցող անունը՝ *ա) նույնական է սահմանված կարգով գրանցված այլ իրավաբանական անձի լրիվ անվանմանը.* *բ) նույնական է Կազմակերպության գրանցմանը նախորդող վերջին մեկ տարվա ընթացքում լուծարված այլ իրավաբանական անձի լրիվ անվանմանը (անվանման հապավմանը).* *գ) պարունակում է հայհոյանքներ, վիրավորական անվանումներ, անհարիր է ազգային կամ հոգևոր արժեքներին, հակասում է մարդասիրության և բարոյականության սկզբունքներին:* *(32.1 հոդվածի 6-րդ մաս)*

Կրոնական կազմակերպության փոփոխությունների պետական գրանցումը մերժելու օրենքով նախատեսված հիմքերը

Կազմակերպական-իրավական տեսակը	«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք	«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
Կրոնական կազմակերպություն	Կրոնական կազմակերպության պետական գրանցումը կարող է մերժվել գործող օրենսդրությանը նրա հակասելու պարագայում: (16-րդ հոդվածի 2-րդ պարբերություն)	**Կրոնական կազմակերպության փոփոխությունների պետական գրանցման մերժման հիմքերն են՝** **1.** կրոնական կազմակերպության փոփոխությունների՝ օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված կարգի խախտումը. **2.** սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված փաստաթղթերը չներկայացնելը կամ ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությունն օրենքին կամ կրոնական կազմակերպության ներկայացրած այլ փաստաթղթերին. *(մասնավորապես՝* *Արձանագրությունը պետք է բովանդակի տեղեկություններ՝* *1) նիստի գումարման օրվա և վայրի մասին.* *2) Արձանագրության կազմման օրվա մասին.* *3) նիստի աշխատանքներին մասնակցելու իրավունք ունեցող անձանց (այդ թվում՝ ձայնի իրավունք ունեցողների) մասին (եթե առանձին կազմակերպական-իրավական ձև ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքներով այլ բան նախատեսված չէ).*

		4) նիստի աշխատանքներին մասնակցած անձանց մասին (եթե առանձին կազմակերպական-իրավական ձև ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքներով այլ բան նախատեսված չէ). *5) նիստի օրակարգը.* *6) քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները.* *7) այլ տեղեկություններ, եթե այդպիսի պահանջ սահմանված է առանձին կազմակերպական-իրավական ձև ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքներով, այլ օրենքներով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ:):* *(17-րդ հոդվածի 6-րդ մաս):* **3.** առկա է կրոնական կազմակերպության փոփոխության գրանցումն արգելող կամ սահմանափակող՝ դատարանի համապատասխան որոշում կամ վճիռ: (43-րդ հոդվածի)